



## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՇԱԳՆԵՐՈՒՄ

Ամերիկայի Միացյալ նահանգների քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհրդի հրավերով Հունիսի 1-ին Մոսկվայից ինքնամբով Նյու-Յորք մեկնեցին Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչները, որոնց կազմումն էին Կրոնացին և Կոլոմենայի միտրոպոլիտ Նիկոլայը (պատվիրակության ղեկավար), Լինիգրադի ավագ քաջանակ Միխայիլ Սլավիասկին, Մոսկվայի Հոգևոր Ճեմարանի գառափոս գոցենու Վլադիմիր Իվանիչ Տալիգինը, որոնք ներկայացնում էին Ռուսական Քրացական Պատվական կազմակարգիչները:

Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա.-ի կողմից Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ էր նշանակված Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ Տ. Մահակ Նպիսկոպոս Տեր-Հովհաննիստանը:

Սովետական Միության քրիստոնեական մյուս եկեղեցիներն ևս ունեին իրենց ներկայացուցիչները:

1956 թվականի մարտի 10-ին Ամերիկայի Միացյալ նահանգների քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհրդի պատգամավորությունը ներկ էր Մոսկվա, Մոսկվայի և Համայն Ռուսիա Պատրիարքը Նորին Սորուս:

Այժմ, Հունիսին, Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատվիրակությունը փոխադարձ այցելության էր մեկնում Ամերիկայի Միացյալ նահանգները:

Հունիսի 2-ի երեկոյան պատվիրակությունը ժամանեց Նյու-Յորք և մնաց մինչև Հունիսի 13-ը: Պատվիրակությունը այդ ժամանակամիջոցում տևակցություններ և խորհրդակցություններ անհետավ Ամերիկայի Քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհրդի և եկեղեցական ղեկավարների Հայոցեկալ Հարցերի շուրջ:

1. Սովետական Միության և Ամերիկայի քրիստոնեական եկեղեցիները ի՞նչ են կտարել և ի՞նչ կարող են կատարել աշխարհում խաղաղության գործին ի նպաստ:

2. Քրիստոնեական եկեղեցիների ազգաւորմանը կատարելու համար իրենց առաքելությունը:

3. Քրիստոնեական հավատը և մյուս կրոնները:

4. Քրիստոնեական հավատը և արդի դիտությունը:

5. Բնիմացիկ ուղղություններ առավածարանական կրթություն մէջ:

6. Քրիստոնեական գրականություն:

7. ՍՍՌՄ-ում և ԱՄՆ-ում գոնվոզ եկեղեցիների փոխարարերությունները:

Քրիստոնեական եկեղեցիների միության փոխադարձ համագողության և համագործակցության հարցերը կարևոր և այժմհական խնդիրներ են:

Այսօր մանավանդ պետք է միասնական ճնշի Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու հավաքական ձախը ի պաշտպանություն առաջադիմության, խաղաղության, ազգերի և կրոնների համերաշխ գործակցության:

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին, իր գործադրության ընթացքում, ամենաշերժ պաշտպաններից մեկն է եղել քրիստոնեական Եկեղեցիների համագործակցության և միասնության Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին մյուս քույր Եկեղեցիների նկատմամբ ունեցել է քրիստոնեական հանգուրժողության լայն ողին նա, ամուր կանգնած իր ազգային-Եկեղեցական գործադրությունների վրա, երբս չի արհամարժել մյուս Եկեղեցիների ազգային իրավական ու ներքին ինքնուրույնությունը և երբեք չի ձգտել միշտառությ լինելու նրանց ներքին գործերի մեջ:

Րաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը Ամերիկայի Միացյալ Նահանգների Քրիստոնեական Եկեղեցիների Ազգային խորհրդի անդամների և այլ Եկեղեցական զեկավարների հետ բարեկամական գրուցներ ունեցավ, ներկայացնելով Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու ասպամարանական ուղղությունը, ներկա կացությունն ու Հայ Եկեղեցու առաջկանգնած հոգևոր զարթունքի և Եկեղեցական կազմակերպչական աշխատանքները:

Սովետական Միության քրիստոնեական Եկեղեցիների պատգամավորությունը եղավ ԱՄՆ-ի մի շաբթ բազարներում՝ Կյու-Ցորում, Վաշինգտոնում, Միություն-Հաուզում, Ե-



Սահակ սրբազնը (ձախում) և Ռոյ Գ. Ռուր (աջում) հետևում են Միարությունի նիկոլայի և դոկտ. էմեն Գարսոն Բլեյկի խոսակցության:

«Միութիւն ի կարևորս, ազատութիւն յերկրայս, և սէր յամենայնիւ— ահա՝ Եկեղեցու միության այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է և այսօր ևս առաջնորդվում է Հայ Եկեղեցին»:

Այս գաղափարների լույսի տակ է, որ Հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը մասնակցեց Սովետական Միության քրիստոնեական Եկեղեցիների Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմանը՝ անդամների կողմից:

Իր համալսարանում, Տոլեդոյում, ծանոթացակ տեսարժան վայրերին, բարեկամական գրուցներ և խորհրդակցություններ ունեցավ ԱՄՆ-ի Քրիստոնեական Եկեղեցիների Ազգային խորհրդի անդամների և այլ Եկեղեցական զեկավարների հետ:

Սովետական Միության քրիստոնեական Եկեղեցիների պատգամավորությունը սիրածիր ընդունելություն էր գտնում ԱՄՆ-ի բոլոր տարրեր Եկեղեցիների և Հավատացյալների կողմից:

**Սովետական Միության քրիստոնեական մկնեցիների պատգամավորության ճանապարհորդությունները, խորհրդակցություններն ու այցելությունները անցնում էին բարեկամական սիրալիք միմայնություններում:**

Քրիստոնեական բոլոր եկեղեցիների սերու փոխարաբերությամբ և համագործակցությամբ միայն կարող է իրազործվել եկեղեցական միությունը՝ որն իր հերթին կհանդիսանա ամբողջ աշխարհում քրիստոնեական վեհ պաղապարների, ճշմարտությունների և

Հոնիսի Յին, կիրակի օր, Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատվիրակության անդամ բոլոր հոգևորականները այցելեցին իրենց ազգային եկեղեցիները:

Միտրոպոլիտ Նիկոլայը եղավ Ռուս Պրավուլավ Եկեղեցում, պատարագեց, քարոզեց և մի սարկավագ ձեռնադրեց:

Գերաշնորհ Տ. Սահակ սորագանը հունիսի 2-ին, շաբաթ Կրեկոյան, հրավեր ստացավ Նյու-Յորքի հայոց Ս. Խաչ եկեղեցու հո-



**Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատվիրակությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների եկեղեցական պատվիրակությունը Սիրութի Հառլում:**

Խաղաղասիրական պատգամների կենսագործման, ժողովուրդների և ազգերի միջև քրիստոնեական եղայրության ազնիվ իդեալների իրականացման խթանը:

\*\*\*

Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնված օրերին պատեհություն ունեցավ նաև այցելելու մի շաբաթ հայրաշատ կենտրոններ, եկեղեցիներ, և բանին կենաց քարոզությամբ, ինչպես նաև Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի մասին խանդակող լուրերով մխթարելու հավատացյալներին:

գարարձության կողմից՝ հաջորդ օրը ներկա լինելու սուրբ պատարագին: Ընդունելով հրավերը, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը կիրակի օր նախագահից եկեղեցական արարողություններին:

Այդ օրը Ս. Էջմիածնի տոնն էր: Եկեղեցին լիբն էր հավատացյալների բազմությամբ: Պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը քառորդեց Էջմիածնի տոնի և Ս. Էջմիածնի խորհրդի ու նշանակության մասին, «Եթէ մոռուացայց զքեզ, Էջմիածին» բնաբանով: Գերաշնորհ սորագանը պատմեց հայրենադարձ հայերի նոր կյանքի մասին Հայրենի Հողի

վրա և Սովետական բարեխնամը կառավարության հայրենագարաժամերին հողամասով և դրամական նպաստներով օգնելու մասին։ Արքազանը խոսեց Հայաստանի մայրաքաղաք Երևանի, Սևանի, Հայրենիքի հովհար, մշակութային ծաղկման մասին և ապա ձանրացավ մասնավանդ նորին Ս. Օծություն Վէ Հափառ Հայրապետի ազգաշխն գործառնության վրա։ Վերջում սրբազնը սրբազնի կոչ արեց Հավատացրաբներին՝ մի որ ուխտի գու Ս. Էջմիածին և Հայրենիք, այցելել մեր պատմական վանքերն ու Սովետական Հայաստանի տեսարժան վայրերու։

Պատարագից հետո գերաշնորհ Տ. Առաք սրբազնի նախագահությամբ կատարվեց Հանդիսավոր Հայրապետական մագթանը։

Կեսօրին վերաշնորհ Տ. Առաք սրբազնը Հյուրաժորից ափար Հարսություն Հազարյանի տանը։ Հնդունելության ներկա էին 50 հոգի։ Առաջին բաժակը սրբազնը առաջարկեց նորընտիր Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի, Մայր Աթոռի, Մայր Հայրենիքի կենացը, որն

բնգունվեց Հոռոմկալու և բաւան ծափահարությամբ։ Բնգունելությունը անցավ շեղմ և սկրայիր մինուսորատում, հայրենիք բազցր Հաշտակներով Համբեմված։ Խանզավառ և սրբազնի ելույթ ունեցան շատերը և արտահայտեցին իրենց սերն ու նվիրվածությունը գեղի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ամենաքիչ Հայոց Հայրապետությունը և պահծայի Մավական Հայաստանը։

Այս արախ ասիմով տիար Հ. Հազարյանը իր անձնական թանգարանից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրեց 260 տարվա հնություն ունեցող մի գեղաշշուս շուրջառ, բերքած Կեսարիայի Ս. Հակոբ եկեղեցուց։

Գերաշնորհ Տ. Առաք եպիսկոպոսը Մայր Աթոռ վերադարձավ յավագույն տպափորություններով և այն խոր համոզումով, որ հեռավոր Ամերիկայի հայ գաղութի մէջ ևս վառ է սերը, նվիրվածությունն ու խանզավառությունը դեպի Հայաստան յայց Առաքելական Ս. Սկեղեցին, Ս. Էջմիածինը և պահծալի Սովետական Հայաստանը։

